ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- մարտի 2021 թվականի №---Ա
ք.Երևան

«ՔԻ ԷՆԵՐՋԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 32-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՔԻ ԷՆԵՐՋԻ» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի մարտի 5-ին, մարտի 9-ին, մարտի 11-ին և մարտի 12-ին ներկայացրած գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՔԻ ԷՆԵՐՋԻ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բնական գազ ներկրելու լիցենզիա՝ մինչև 2022 թվականի մարտի 16-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «ՔԻ ԷՆԵՐՋԻ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրվող՝ Հայաստանի Հանրապետություն Իրանի Իսլամական Հանրապետությունից բնական գազի ներկրման լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 16-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- մարտի 2021թ.